

ԵՐԵՎԱՆԻ ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 8

ՄԱՅԻՍ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՆՈՐ ԱՐՄԵՆԻ

Սեպտեմբեր 10 թվականին կես տարվանը 6 թուր-
Առանձին համարները 5 կողմիցով:

Քիչիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисы, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Պարագրուիները բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կողմից:
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Մայիսի 6 ին հանգիստ հոգին աւանդից գնդապետի այրին

ԿԱՏԱՐԻՆԷ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆԸ

Նատալիա Տեր-Բարսեղեանը, Աննա Մանգինեանը և Մեղրաք Մանգինեանը ինչորում
են ազգականներին և բարեկամներին յարգել հանգուցիտ յիշատակը: Ամբողջ մա-
յիսի 9-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը (բժշկապետ Գաթանեանի
տնից—3. Могинский типик) մայիսի 10-ին (երեքշաբթի), առաւօտեան ժամը 10-ին,
Աւետեաց (Ջգրաշէնի) եկեղեցին, իսկ այնտեղից. Ս. Ղիվանքի գերեզմանատունը:

ԲՈՎԱԼՆԻՔԻ ԿՈՒՆԻՍՏԱՆ

Խմբագրութեան կողմից. Շիլլերի յիշատակ-
ին. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթողիկոսի հայերի
եպիսկոպոսական աթոռը Ռուսաստանում.
Փոխաբերան բաղադրանքի հետ. Շիլլեր-ու իս-
լամի ճանը. Փոխաբերան Նախիջևանի գաւառում.
Քաարուն և կրածուութիւն. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստա-
նից.— ՀԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր բաժանուի ի մի որոշ թիւ
անհն տարի ամառայ ամիսներում փո-
խում է հասցէները, որովհետեւ ամառա-
նոց տեղափոխվելու պատճառով ցանկա-
նում է լրագիր ստանալ ժամանակաւո-
րապէս հաստատված տեղերում: Սակայն
բաժանորդները կողմից ազդարարութիւն-
ները մենք ստանում ենք անհասարակ
բաւական ուշ, այնպէս որ լրագրի հա-
մարները մի որոշ թիւ գնում և նախկին
հասցէներով, իսկ ամառանոց գնացող
ցանկութիւն է յայտնում, որ նրան ու-
ղարկին նոյն այդ համարները դէպի նրա
նոր բնակատեղը: Երբ որ խմբագրատանը
կայ աւելորդ համարների պաշար, մենք
աշխատում ենք բաւարարութիւն տալ
ցանկացողներին, բայց շատ անգամ ան-
կարող ենք լինում այդ անիւտ: Բացի
այդ՝ ամառանոց գնացող բաժանորդները
մի մասը մոռանում է ապագայում գրե-
լու, որ լրագրը դարձեալ ուղարկվի
նախկին հասցէով և այդ պատճառով մի
քանի շաբաթներ լրագիրը գնում է տըր-
ված հասցէով և սիւսն ուշ ստանում
ենք ազդարարութիւն, թէ պէտք է դա-
դարեցնել եղած հասցէն և վերանորոգել
հինը:

Խմբագրութիւնը խնդրում է հասցէ-
ները գրել որոշ, նշանակելով թէ հին
հասցէն, որով ստացվում է եղել լրագիրը
մշտական բնակութեան տեղում և թէ
նոր հասցէն, որով պէտք է ժամանակա-
ւորապէս ուղարկել, սահմանելով, եթէ
կարելի է, նախօրոք, ժամանակամիջոցը,
որի ընթացքում պէտք է լրագիրը ու-
ղարկվի ժամանակաւոր հասցէով:

Հասցէն ժամանակաւորապէս փոխելու
համար նշանակված 40 կողմէր վճար-
վում է միայն մի անգամ, առաջին փո-
փոխման ժամանակ, իսկ հին հասցէին
վերադառնալու համար ոչինչ չէ վճար-
վում:

ՇԻՂԵՐԻ ՅԻՇՆԱՍԿԻՆ

Այսօր, թիֆլիսի Արախտական ընկե-
րութեան դահլիճում նշանակված է գրա-
ւան-երաժշտական մի ցերեկային Շիլլերի
յիշատակին նրա մանկան հարիւրամեակի
առիթով:

Շիլլերը համաշխարհային այն անուն-
ներից մէկն է, որոնց գործունէութիւնը
արձագանք է գտնում իրանց հայրենիքից
հեռու գտնվող երկրներում, առաջ բե-
րելով գնալարական ոգևորութիւն և
հուզական միջնարարութիւն:

Կանների սկզբում «Հիւսիսային» ամ-
սագրի էջերում լոյս տեսած Շիլլերի եր-
կասիրութիւնները գրաւեցին հայ ընթեր-
ցողի սիրտը: Այնուհետև ժամանակ առ
ժամանակ լոյս էին տեսնում նրա խոշոր
գրուածքների թարգմանութիւնները:

Շիլլերի անմահ հեղինակութիւնները
գլխաւոր թարգմանիչը մեզ ձուտ եղել է
Գէորգ Բարխուդարեանը, որ իր գրական
աշխատանքի մեծագոյն մասը նուիրել
է գերմանական հանձարի ուսումնասի-
րութեան: Շիլլերի կեանքի և գործունէ-
ութեան մանրամասն նկարագրութիւնը
ստուեց հայ գրականութեան Ս. Թաւայեան
երկու հատոր մի աշխատութեան մէջ,
որ լոյս տեսաւ երկու տարի սրանից ա-
ռաջ, ճորտաբարձ պատկերներով և կարևոր
բացատրութիւններով:

Շիլլերի բեմական գրուածքները շատ
անգամ դրվել են հայկական բեմի վրա
ոչ միայն Թիֆլիսում, այլ և գաւառնե-
րում:

Այն մաքուր իդէալականութիւնը, որ
ստանայալու է Շիլլերի գրուածքները,
այն լայն մարդասիրական հայեացքները,
որ նա քարոզում է մարդկանց, այն ա-
զատասիրական ոգին, որով համակված են
նրա գրչից բխած ստեղծագործութիւն-
ները,— դարձնում են նրան ազգերի սի-
րելի: Եւ «Օրլէանի կոյս», «Բոն-Կարոս»,
«Աւագակներ» և ուրիշ նշանաւոր գոր-
ծերի անմահ հեղինակը միշտ մեծ երախ-
տադիրութեամբ կը յիշվի ոչ միայն իր
սեփական հայրենիքում, այլ և հայ հասա-
րակութեան շրջաններում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՒՆԻ ՀԱՅՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԱԿԱՆ ԱՌՈՒՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պատմական տեսութիւն *)

I

Ռուսաստանում կաթողիկոսի հայերի հոգևոր
վարչութեան հարցը Վրաստանի միացման
թուականից չէ սկսվում: Հայ-կաթողիկոսներ ոչ-
անչառն թելով ապրում էին Լեհաստանում,
Խրիմում, Աստրախանում և հիւսիսային Կով-
կասում (Մոզդուլում): Այն ժամանակ նրանք
ենթարկված էին Լէմբերգի (Լեհաստանում)
հայ-կաթողիկոս արքեպիսկոպոսին: Ռուսաց կա-
ռավարութիւնը նրանց անտի վարչաց սկսել
էր հոգար: Լեհաստանի մասջին բաժանումից
յետոյ Լէմբերգն անցաւ Աստրիսային, ուստի
1784 թ. փետրվարի 28-ին արձակված կայ-
սերական մի ուկաղ հրամայում էր Մօզիլեով
քաղաքում հիմնել հայ-կաթողիկոսի ճոզուր
պարտը, իսկ մինչև այդ հաստատվելը եկեղե-
ցական կրթութիւն ստանալ ցանկացող պա-
սանիներին ուղարկել Լէմբերգի հայ-կաթո-
լիկոսների կողմէ: Բայց երբ 1793 թ. Լեհաս-
տանի երկրորդ բաժանումից յետոյ Կամէնց
քաղաքը ևս անցաւ Ռուսաց ձեռքը, Ռուս կա-
ռավարութիւնը որոշեց 1806 թ. իր հպա-
տակութեան մէջ մնացածների համար հիմնել
յատուկ «հայ-կաթողիկոսի թեմ» (Армяно-като-
лическая епархія):

*) Այս տեսութիւնը կազմելու ևս ձեռքի տակ եմ ու-
նեցել Վատիկանի պրոպագանդայի, Կ. Պոլսի հայ-կա-
թողիկոս պատրիարքարանի և Անտոնեան Միլանոնե-
թեան դիւանատաներից հանված վաւերագրերի պա-
ճէնները: Օգտված եմ նոյնպէս «Кавк. Арх. Ком.» աղ-
տերից:

Այս կարգադրութեան վրա Մօզիլեով լա-
տին միտրոպոլիտը հանգամանքից օգտվելով
ճրագիր կազմեց իր իշխանութեան տակ մրաց-
նել հայ-կաթողիկոսներին: Այս նպատակով նա
առաջարկեց Ռուսական կառավարութեան՝ Կա-
մէնցի լատին եպիսկոպոսին ընթերցակաց
կամ օժանդակ-եպիսկոպոս (suffragant) նշա-
նակել մի հայ վարդապետ և այս վերջինին
յանձնել հայ-կաթողիկոսի հոգևոր վարչու-
թիւնը: Մի և նոյն ժամանակ այդ պաշտօնի
համար նա յանձնարարեց իր ձեռնասուններէց
հայագրի Յովսէփ Բրիստոֆորովիչ քահանայն,
որ արդէն ժողովրդագետ (curé) էր Մօզիլե-
վում: Կառավարութիւնը այս առաջարկու-
թիւնը ընդունելով՝ Բրիստոֆորովիչի եպիսկո-
պոսացումը հաստատեց և նրա պարտաւոր
համար էլ տարեկան 3000 թուրքի յատկացրեց:
Բայց միտրոպոլիտի ճրագիրը դրանով չէր
վերջանում: Բրիստոֆորովիչ, իբրև լատին ե-
պիսկոպոսի օգնական, պարտաւոր էր նաև
լատին ծէս գործածել, նա ենթարկվում էր
միտրոպոլիտին, որով «հայ-կաթողիկոսի թեմը»
մտնում էր միտրոպոլիտի իրաւասութեան
տակ:

Այս բոլորը կատարվում էր առանց Հո-
մի գիտութեան: Միև կողմից Լէմբերգի
հայ արքեպիսկոպոսն էլ չէր կարող անտար-
բել մնալ այս վիճակին և նա 1807 թ. ին
փետրվարի 27-ին, Հոմի իր գործակալ
Բուրիեան եպիսկոպոսի միջոցով գնաւառվեց
Մօզիլեով միտրոպոլիտի այս վարձուքի դէմ:
Նոյն հարցի առիթով Բուրիեան մի երկրորդ
տեղեկագիր ներկայացրեց Վատիկանին 1808 թ.
յուլիսի 6-ին: Պրոպագանդայի ժողովը գործի
կարևորութիւնն է նկատի առնելով, ընտու-
թիւն նշանակեց և ընտիչ կարգեց կարդինալ
Անտօնէլլին, որը մանրամասն քննութիւնից
յետոյ եկաւ այն եզրակացութեան, թէ իրօք
Մօզիլեով «փառաւէր» (կարդինալը գործա-
ծած բանն է) միտրոպոլիտը Կամէնցի եպիս-
կոպոսին մի հայ-կաթողիկոս ընթերցակաց կամ
օգնական-եպիսկոպոս նշանակելով, անշատի է
կաթողիկոսի նշանակել Լէմբերգի հայ արքեպիսկո-
պոսի իրաւասութիւնից, թէ այդ ձևով Կամե-
նցի հայերի վրա լատինաւէս օժանդակ-ե-
պիսկոպոս նշանակել անհիթեթ գործ է և
թէ դրանով Ռուսաստանի միւս կողմերում
բնակվող հայերը (կաթողիկոս) մնում էին ան-
տէր և անհովիտ:

Հոմի Աթոռը ի նկատի առնելով այս գե-
կուցումը և մի և նոյն ժամանակ հայ արքե-
պիսկոպոսի խնդրեք՝ գործը շտապեցնելու
մասին, որովհետ է Բրիստոֆորովիչին հաստա-
տել ոչ թէ Կամէնցի լատին եպիսկոպոսի
օգնական, այլ միայն հայ ծէսի եպիսկոպոս և
անկախ կառավարիչ Ռուսաստանի հայ-կաթո-
լիկոսի վրա: Ըստ այսմ 1809 մարտ 22 թը-
ւում կոնդակ է սրվում, որով Բրիստոֆորովիչ
նշանակվում է առաւելական փոխանորդ
Ռուսաստանի բոլոր կաթողիկոսի հայերի համար
(in armenos omnes catholicos qui Rossiae dit-
tionis qua late patet finibus, continentar):
Այս թղթի հիման վրա հայ-կաթողիկոս առաջ-
նորը ենթարկվում է ուղղակի Պրոպագանդա-
յին: Հոմի այս որոշումից յետոյ կայսերական
մի նոր ուկաղ 1810 նոյեմբերի 7 թ.ում, հրա-
մայում է հաստատել Ռուսաստանում մի հայ-
կաթողիկոսի եպիսկոպոս և այդ պաշտօնը յանձնել
Յովսէփ եպիսկոպոս Բրիստոֆորովիչին, որ
իր օժանդակ ընդունել էր Լէմբերգի հայ-կաթո-
լիկ արքեպիսկոպոսից:

Բրիստոֆորովիչ երկար չը կարողացաւ վա-
րել իր պաշտօնը. նա վախճանվեց 1816 թ.ի
մարտի 3-ին: Նրա փոխարէն, 1818-ին Կայ-
սերական հրամանով նշանակվում է Անտոն
եպիսկոպոս Բուրադեան: Սա մի շատ հետա-
քրքիր անձնաւորութիւն է, որի մասին արժե
մի երկու խօսք ասել:

Բուրադեան (= Buradian, ինչպէս կարող
ենք լատիներէն գրութիւնները) մէջ կամ Պու-
րադեան, ինչպէս ստորագրում էր ինքը, տար-
բերութիւնը աւելորդ հնչման մէջն է) ծնվել է
1760 թ.ի օգոստոսի 6-ին Բուրայիսում կա-

թողիկոսներից, քահանայ է ձեռնադրվել
Կ. Պոլսում, 1790-ին և Մօզիլեով հայ-կաթո-
լիկոսների խնդրեքով եկել է Մօզիլեով 1792-ին,
ուր, ինչպէս գրում է ինքը, «ամս ութ եղէ
հոգևոր կառավարիչ Աթոլիսիանու և բոլոր
ուղղափառ ընակաց կովկասում»: 1810-ին նա
դառնում է Ռուսաստանական և Եփրատ կաթո-
լիկոսի հոմ գնում է շրջակայի Արարատու,
որ է տեղի ունի և երկրպագութեան: Այն-
տեղ, Կարսի և Ախալցխայի ժողովրդից ստա-
ցած վկայականի հիման վրա կաթողիկոսը
նրան եպիսկոպոս է ձեռնադրում 1815 թ.ի
մայիսի 9-ին: Հետեւալ տարին նա վերստին
կաթողիկոսութեան է ընդունում, գնում է Լիբա-
նանի հայ-կաթողիկոսների վանքը, ուր մնում է
մէկ տարի և ապա 1817 թ.ի յունիսին գալիս
է Կարատալազար, Սրբիմու:

1818 թ.ի մայիսի 15-ին Աքքէջիտում ներ-
կայանում է Ռուսաց կայսր Ալեքսանդր I-ին,
որը խոստանում է նրան հաստատել թեմական
առաջնորդ անգլուցեալ Բրիստոֆորովիչի տե-
ղը: Բայց նախ քան այս պաշտօնին կոչվելը
կառավարութիւնը մի ինչ որ իշխան Գուր-
ցինի միջոցով, բացատրութիւն է պահանջում
նրանից իր կրօնափոխութեան պատճանները
մասին: Բուրադեան տալիս է պահանջված
բացատրութիւնները, որոնք բաւական հետա-
քրքրական են, բայց մեր նպատակից դուրս է
այստեղ նրանց վրա կանգ առնելը: 1818 թ.ի
յուլիսի 12-ից կայսրը հաստատում է նրան,
բայց դրանով խնդրեք չէ վերջանում, որով-
հետև Հոմը հակառակվում է՝ կասկածելի
գտնելով նրա անցեալը: Այն ժամանակ նա
աղերսազրով դիմում է պաթոն 1821 թ.ի
յունիսի 16-ին: Դեռ իր հաստատութիւնը
Հոմից չը ստացած, Բուրադեան վախճանվում
է 1822-ին: Թէև, ինչպէս ասացինք, Բուրա-
դեան եպիսկոպոսը Ռուս կառավարութեան
կողմից որոշված էր, բայց Հոմից հաստա-
տված չը լինելով, իրօք Բրիստոֆորովիչի մա-
վանից յետոյ թեմը կառավարում էր մի հայ
վարդապետ՝ աճը Անտոն վ. Վարդեղոսովիչ
որ նոյնպէս մեռել է 1822-ին:

1810 թ.ի նոյեմբերի 7-ի ուկաղը հրամա-
յում էր, ի միջի այլոց, որ Ռուսաստանակ
հայ-կաթողիկոսների համար յատուկ կղերանոց
հիմնվի, բայց, դժբախտաբար, այդպիսի կղե-
րանոց ոչ մինչև 1822, ոչ էլ այնուհետև հիմն-
վեց: Դրանից յետոյ կառավարութիւնը
1832-ին Վիլնայի համալսարանում ձևատառեց
«Փակուլտէտ հայ-կաթողիկոս դաւանութեան հա-
մար» (Факультетъ для армяно-католическаго
исповѣданія), բայց այդ էլ ապարդիւն մնաց:
Մանաւանդ այդ կղերանի կողմերից ոչ մէկը օգուտ
չը բաղեց այդ ֆակուլտէտից:

Մեր այս տեսութիւնից պարզ երևում է,
որ Ռուսաստանում հայ-կաթողիկոսների համար
յատուկ թեմ և սեփական, հայագրի եպիսկո-
պոս հաստատելու հարցը նոր բան չէ, այլ ու-
ղիղ 100 տարվայ գոյութիւն ունի և նա զբա-
ղանապէս արդէն վճռված է եղել Ալեքսանդր
I կայսրի օրով: Միայն պատմական հանգա-
մանքներ արգելք են եղել, որ եպիսկոպոսա-
կան աթոռը շարունակվէր Մօզիլեովում: Նախ
Վրաստանի միացմամբ և ապա 1829-ի պա-
տերազմից յետոյ Ախալցխայի առումով և
Թիւրքիայից բազմաթիւ գաղթականների դա-
նով գործի յիսակէտը տեղափոխվում է Լե-
հաստանից Կովկաս և հայ-կաթողիկոսների եկեղե-
ցական վարչութեան հարցի կարևորութիւնը
աւելի զգալի է դառնում Կովկասում, քան Լե-
հաստանում և Խրիմում, ինչպէս որ էր մինչև
այն ժամանակ: Անցնենք ուրեմն Կովկաս:

Մարտիան

ՓՈՒՍՏՐԲԱՆ ԲԱՎՈՒՆԻՑԵՆԵՐԻ ՀԵՏ

Վաղ առաւօտանից, մայիսի 4-ին, արդէն
սկսել էր կենդանութիւն սրբել քաղաքում:
Շատ թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական
անձեր շտապում էին Բաւլաշարի կայարանը,
որտեղ պիտի կանգ առնէր Փոխաբերան: Կէս
օրվայ ժամը 2-ին գնաց արտակարգ գնացքը:

որ յատկացրած էր պատգամաւորութիւններին և ներկայացուցչներին:

Բարևարի կայարանը իր ամբողջ երկարութեամբ շքեղ դարձաւ և էր կանխներով դրօշակներով, իսկ պլատֆորման ծածկված գորգերով:

Ժամանակաւոր գեներալ-նահանգապետ իշխան Ամիրխանը կարգադրում էր թէ զորքի և թէ պատգամաւորների կանգնելու տեղերը:

Վերջապէս ժամը 4 և 20 րոպէին հանդարտ կերպով կանգ առաւ Փոխարքային բերող արտակարգ գնացքը և սովորական պաշտօնական — ձեռքի ցերեմոնիայից յետոյ սարժն-վագօնից դուրս եկան կոմսը և կոմսուհին, որոնց դիմաւորեցին թարմ ծաղիկներէ շքեղ փունջերով և կողմնակիցով, որից յետոյ մտնեցան շարքով կանգնած պատգամաւորութիւններին:

Ամենից առաջ ողջունեց ուղղափառ հոգևորականութեան մեծը՝ Ա. Ի. Իւնիցկին մի քանի խօսքերով, որից յետոյ հայ հոգևորականութեան ներկայացուցիչ Չաւէն վարդապետը ողջունեց բարի գալուստը հետեւեալ խօսքերով. «Անդրադիկասի շէքրում ողջունում եմ Ձերը պայծառափայլութեան և կոմսուհու մուտքը մեր երկիրը: Աղօթում եմ Աստուծուն, որ Նա Ձեզ ոյժ տայ կառավարելու մեր թանգազին հայրենիքը ի բարօրութիւն նրա բազմաթիւ ազգութիւնների և բոլոր Ռուսիային»:

Ապա հայ հասարակութեան ներկայացուցիչ պ. Կոստանային Ստախանը դիմեց կոմսին հետեւեալ խօսքերով.

«Բազուի հայ հասարակութիւնը մեզ արժանացրել է Ձերը Պայծառափայլութեան Կովկաս գնալը շնորհաւորելու պատւին: Բարդաւոր և հպարտ մեզ վրա դրած պարտականութեամբ, մենք ասում ենք Ձեզ, կոմս, և Ձեր ամուսնուն, կոմսուհուն.

«Բարի էք եկել: «Մենք, Բազուի հայերս, հոգեպէս ցաւում ենք, որ Ձեզ, կոմս, չենք դիմաւորում այն շքեղութեամբ և հանդիսաւորութեամբ, ինչպէս մենք կը կամենայինք դիմաւորել Կայսրի փոխարքային:

«Ձէք սազում, Ձերը Պայծառափայլութիւն, այդ շքեղութիւնը և հանդիսաւորութիւնը մեզ, որ մօտ ժամանակներում թաղել ենք մեր մի քանի հարիւր եղբայրներին՝ կոտորված այնտեղ, Բազուի փողոցներում և հրապարակներում:

«Մի պահանջը մեզինց այդ, կոմս: Թող այդ փառահերոսները փոխարինէ ոչ ազդակալի, բայց մեր ուրախութեան անկեղծ արտայայտութիւնը այն բանի առթիւ, որ մենք, վերջապէս, տեսնում ենք Ձեր մէջ մի ժամանակ հրաշալի, բայց այժմ անբոված, տանջված և քայքայված մեր երկրի խաղաղութեան և հաշտութեան աւետարներին...»

«Մենք տեսնում ենք Ձեզ, կոմս, և հաստատ հաւատում ենք, որ Ձեր գալովը կովկասեան պատմութեան վերջի տարիների մասը յիշողութիւնները անհետ կը կորչեն, կը կորչեն, ինչպէս մի ծանր հօշոմար և որ մեր կենսքում կը սկսէ մի նոր, փառաւոր շրջան, երբ դուք, մօտ ծանօթանալով այն հայրեր հետ, որոնց դուք, գուցէ, կը կոչէք օգնել Ձեզ Կովկասի վերջերք բուժելու, ուղիղ և ազնիւ կերպով նայելով մեր Կայսրի աչքերին, կասէք. «Այն, հայ ժողովուրդը այն ժողովուրդն է, որի վրա կարող է յուսալ ամբողջ Ռուսիան և որին վիճակվում է, ինչպէս և հին ժամանակներում, միջնորդ և ուղեցոյց լինել նրա կուրտուրական և գերտական ձեռնարկութիւններին Արևելքում»:

«Նորից բարով էք եկել, կոմս: Բարի էք եկել և թող օգնէ Ձեզ Տէրը աշողութեամբ կատար անել Կայսրի Ձեզ վրա դրած ծանր, բայց չափազանց շնորհակալ պարտականութիւնը...»

Այս զգացված խօսքերին կոմսը պատասխանեց. «Երկրում հաստատելու համար այն հաշտութիւնը, որի մասին դուք ասում էք, անհրաժեշտ է փոխադարձ վստահութիւն. ինքս անձամբ կամենում եմ կատարել խաղաղութիւն: Այդ է Կայսրի իմ վրա դրած պարտականութիւնը և յոյս ունեմ իրագործել ձեր իրաւորութեան ոյժերի օգնութեամբ: Առանց հանգստութեան երկրի խաղաղ կուրտուրական զարգացումը անկարելի է: Ծնորհակալ եմ ձերից ձեր բարի ցանկութիւններին և առաջարկած աջակցութիւններին համար»:

Նախարարներու դիմելու և բարձր կողմից խօսեց պ. Ստախան թաղիստեանացի հետեւեալը. «Ձերը պայծառափայլութիւն, կոմս Իլլարիօն Իվանովիչ: Բազուի բարձր կոմիտեան և նախարարներու դիմելու խորհուրդը, ինչպէս տեղական առևտրի և ար-

դիւնաբերութեան ներկայացուցիչներ, ողջունում են անկեղծութեամբ Ձեր բարի գալուստը: Երբ, հեռաւոր հիւսիսից եկածիդ, բարի համբաւը, Ձեր արտաքին և ուշադիր վերաբերմունքը դէպի Կովկասի ժողովրդների ներկայացուցիչները մայրաքաղաքում, Ձեր անձնական և մօտիկ ծանօթութիւնը Կովկասի մարդկանց և բնութեան հետ, ընդհանուր բերկրանքով լսած Ձեր դիմումը՝ երկրի ազգաբնակչութեան հասարակական ոյժերին, Ձեզ հետ միասին գործակցելու հրաւերը,—այդ բոլորը մեզ լի ու լի հաւատ են ներշնչում, որ մեր երկրի վրայից կախված մասը և դատան ամբողջը շուտով կը ցրվեն, որ մօտ են այն պայծառ օրերը, երբ տանջված և հիւժված Կովկասը նորից կը վերածնվի և կը վերադառնայ խաղաղ, հանգիստ, կուրտուրական կենսքին: Հաւատում ենք, կոմս, որ մօտ է մեր վաղուց ցանկացած ժամը, երբ երկիրը, Ձեր հմուտ և մարդասէր ղեկավարութեամբ, ձեռք կը բերէ այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է մեր ժողովրդների հարուստ ոյժերի ազատ զարգացման, որոնք ուղևորված են հայրենի երկրի հետ կապվելու անմեղանք զգացմունքներով»:

«Երբ երկրի բնութեան շոյալ ձեռքով շոյ տուած անհամար հարստութիւնները կենսքի կոչված կը լինեն և գործ կը դրվեն առևտրի և արդիւնաբերութեան՝ ժողովրդական բարգաւաճման և բարօրութեան հզօր հիմքերի,—ազատ զարգացման համար:

«Մեր սրտի խորքից մաղթում ենք Ձեզ, կոմս, ոյժ ծանր, բարձր-պատասխանատու, բայց և բարձր-վեհ խնդրի—այն է մեր թանգազին երկրի խաղաղացման, հանգստացման և շէնացման իրագործմանը՝ ի փառս ամբողջ Կովկասի, ի փառս ամբողջ Ռուսաստանի:

«Եւ թող Ձեր կառավարութիւնը լինի բարիտար ու անփոփոքրիկ: «Նորն ոգով և բարեմաղթութիւններով խօսեցին հրեական, մանսիական և մօլօկան համայնքներ և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները, որոնց շնորհակալութիւն էր յայտնում կոմսը և յոյս տալիս, որ տեղական կարող ոյժերի աջակցութեամբ իրան կաշտով իր վրա դրած ծանր պարտականութիւնները աշողութեամբ ի կատար անել:

Ապա 5 ժ. 10 ր. միասնաբար «ուսանքի» ուղեկցութեամբ գնացքը շարժվեց, ամենից իր հետ թանկագին հիւրերին և յոյսերի ահագին կոյտեր:

Փոխարքային ուղեկցում էր Բազուի նահանգի սահմաններում նահանգապետ իշխան Նակաշիձէ, իսկ Բարևարից իրացան նաև գեներալ-նահանգապետ իշխան Ամիրխանը:

Ռ. Յովհաննիսեան Բագու.

ՇԵՏԵ. ՈՒՎ-ԻՍՍԱՄԻ ԱՆՈՒՂ

Մենք հարորդել էինք, որ Թիֆլիսի մահմեդական հոգևորականութեան ներկայացուցիչները արտասանել էին ճառեր Փոխարքայի մղկիթներն այցելութեան ժամանակ:

Շիֆաբի մղկիթում անդրկովկասեան շէյխու-լ-իսլամը ողջունեց Փոխարքային հետեւեալ ճառով:

«Ձերը Պայծառափայլութիւն: Մանր, բայց Ամենակարող Ալլահի օգնութեամբ մեր թանգազին Կովկասի կենսքի շուտանցումը պայծաններում, երբ սկսվեց յուզվել նրա ազգաբնակչութեան մի մասը և անհրաժեշտ համարվեց յանձնել երկրի խաղաղացումը Բարձրագոյն Իշխանութեան բացառական վստահութիւնը վայելող անձի, Օգոստոսիփառ Ինքնակալի ընտրութիւնը ընկաւ ձեզ վրա, և դուք, Ձերը Պայծառափայլութիւն, յանձն առաք այդ ծանր միտքի, ղեկավարվելով մի միայն հաւատարիմ հպատակութեան զգացմունքներով դէպի թագաւորը, հայրենասիրութեամբ դէպի հայրենիքը և մարդասիրութեամբ դէպի Կովկասի ազգաբնակչութիւնը, որովհետեւ ում չէ յայտնի, որ Կովկասի Իլլարիօն Հրա-մանատարի պաշտօնը կատարելագոյն ոչ մի տեսակէտով չէ կարող հրապուրել լինել ձեզ համար,—մի բարձրաստիճան անձի, որ վստահութեամբ է այս աշխարհի բոլոր բարձր բարքերը:

Այդ պատճառով համարելով ձեր նշանակումը Փոխարքայ թագաւոր Կայսրի բացառական ուշադրութեան նշան դէպի՝ Կովկասի կարեքները, մենք, մահմեդականներս, հէնց որ լսեցինք այդ նշանակման մասին, կատարելագոյն համովկցեցինք, որ մեր երկրի համար բացվել է նոր դարաշրջան,—դարձաւոր մարդասէր և արդարացի վերաբերմունքի դէպի Կովկասի ժողովրդները օրինական և արդարացի շահերը

և ձգտումները, իսկ մահաւանդ մահմեդականները, որովհետեւ մենք, մահմեդականներս, Ռուս թագաւորների վաղեմի հաւատարիմ ծառայողներ, երբէք ոչ միայն գործով, այլ և բանիւ ոչինչ սեպարատիստական զգացմունքներ չենք ունեցել: Եւ չեն կարող սեպարատիստական մտքեր ունենալ մահմեդականները, որովհետեւ Իմամ Մուսէ-Քեազուլի սրբազան խաղաղ ասում է. «Մի կործանէք ձեզ անհնազանդութիւն ցոյց տալով թագաւորին, ինչ թագաւորը արդարադատ է, այն ժամանակ աղբսեղեք Աստուծուն նրա թագաւորութիւնը երկարատեւելու համար, իսկ եթէ նա անարդար է, աղաչեցէք Բարձրագոյն նրա սիրբը փափկացնելու մասին, որովհետեւ ձեր բարդը և հանգստութիւնը նրա ձեռքում են. բացի դրանից, արդարադատ թագաւորը պէտք է մեծարված լինի հպատակներից, որպէս սիրելի հայրը. ուստի խնդրեցէք Ալլահից թագաւորի համար այն, ինչ որ խնդրում էք Ամենաբարձրագոյն ձեզ համար, և մի ցանկանաք թագաւորի համար, ինչ չէիք ցանկանայ ձեզ համար»: Մակայն, չը նայելով մահմեդականներին ուղղամտութեանը, մենք դժբաղդաբար, մեծարված և անհասկանալի անվստահութեան պատճառով դէպի մեզ, սաստիկ սասձանափակված ենք մեր կրօնական, քաղաքացիական և քաղաքական իրաւունքների մէջ, որի պատճառով, երբօրական կուրտուրայի տեսակէտով, այնպէս յետ ենք մնացած ոչ միայն կայսրութեան բուն ազգաբնակչութիւնից, այլ և մեր դարաւոր հարկաներից,—Իտտեցէք, Ձերը Պայծառափայլութիւն, ինքնուրուի, թէ որպիսի ուրախութեամբ և երախտագիտութեամբ լըցվեցին մեր սրտերը դէպի ձեզ, երբ իմացանք այն խօսքերը, որ Ձեր Պայծառափայլութիւն ասել է Պետերբուրգում ձեզ ներկայացող կովկասեան մահմեդականների պատգամաւորութիւններից մէկին: Լսելով Երևանեան պատգամաւորների միջնորդութիւնները մահմեդականների կարեքների մասին, Ձեր Պայծառափայլութիւնը բարեհաճել էք պատասխանել. «Մի հաւատացած եմ, որ մահմեդականները հաւատարիմ հպատակներ են և ես ամեն բան կանեմ նրանց իրաւունքները Ռուսաստանի մնացած հպատակների իրաւունքների հետ հասարակեցնելու համար»:

Իրանով ամեն բան ասված է: Մահմեդականները հէնց այդ են կամենում—հաւատար իրաւունքներ Ռուս թագաւորի ուրիշ հաւատարիմ հպատակների հետ: Մենք հաւատում էինք, մենք խորը համոզված էինք, որ մեզ համար ձեր թանգազին խօսքերին կը հետևէ և գործը, և ամբողջ աշխարհը կը տեսնէ ձեր խօսքերի մարմնացումը իրական ձևի մէջ, և անա, այս օր, բոլորը անխայտի համովկցեցին այդ բանում: Եւ յիշուի, հէնց ձեր քառալին քայլից ձեր բեզդեֆէցիայում դուք ցոյց տուիք, որ ձեզ համար բոլոր ժողովուրդները հաւատար են, որովհետեւ դուք յիշեցիք մեր մասին, և չը նայելով հէնց նոր կատարած հեռաւոր ձանապարհորդութեան դժուարութեան և անխուսափելի յոգնածութեանը, այցելեցիք և մեր համեստ մենաստանը: Իսկ եթէ յիշել, որ դուք, Ձերը Պայծառափայլութիւն, առաջինն էք Կովկասի կառավարչները, որ Թիֆլիսի մահմեդական ժամանակայինները էք և մղկիթը, այն ժամանակ դուք միայն մասամբ կարող էք հասկանալ այն անպատմելի ուրախ զգացմունքները, որ մենք զգում ենք, կովկասեան մահմեդականների համար բարե բուն մտքով այս պատմական մօմէնտին: Լսելով, որ ձերը պայծառափայլութիւնը այցելելու է մղկիթը ձեր Թիֆլիս մուսաբորժելու օրը, այստեղ հաւաքվեցին Անդրկովկասեան երկրի բոլոր անկեղծների մահմեդական ազգաբնակչութեան ներկայացուցիչները և լիարժեքութիւն տուին ինձ խնդրել ձերը պայծառափայլութեան արկանել առ ողջ թագաւոր Կայսրի սիրոյ, անսահման անձնուրիշութեան, երկիւղած շնորհակալութեան զգացմունքները և վկայել, որ Նորին Կայսրական Մեծութեան Փոխարքայի խօսքը միտք օրէնք կը լինի Անդրկովկասեան երկրում բընակվող շիա դաւանանքի հաւատարիմ հպատակ մահմեդականների համար: Եւ թող օրհնէ ձեզ Ալլահը ձեր աշխատանքների մէջ: Եւ թող տայ ձեզ առողջութիւն, ամբողջութիւն և ոյժ: Եւ թող երկարացնէ ձեր մեզ համար թանգազին կենսքը: Իսկ մենք ընդմիջում կը պահպանենք մեր և մեր սերունդների սրտերում խնդազին յիշողութիւն այս օրվայ մասին»:

ՓՈՒՍՐ-ՄԻ ՆԱԽԻՉԻՆՆԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ Մայիսի 3-ին Երէկ, ամսիս 2-ին, Նոր-Նախիջևանի և Բօս-

սովի հայերը Նախիջևանի կայարանում դիմաւորեցին Կովկասի փոխարքայ կոմս Վօրօն-ցով-Իշաղովին և նրա ընտանիքին: Իրա գնացքը գալուց շատ առաջ կայարանում հաւաքվել էր երկուսու հայերի մեծ բազմութիւն: Երկաթուղու գծից մինչև սենեակը փակված էր կարմիր մահուղ և նրա կողքերին շարած գեղեցիկ ծաղիկներով ծաղկամաններ: Սենեակը թաւշեայ թանգազին բազմոցներով և խալիկներով զարդարված էր: Ընդհանրապէս արել էին այն ինչ կարելի էր օր ու կիսովայ մէջ կատարել Նախիջևանի կայարանի նման մի յետ ընկած և անշուք տուն զարդարելու համար:

Իրան մուտքի երկու կողմերում շարված էին Իդրոյեան դպրոցի աշակերտները իրանց վարժուհու հետ, ձեռքերին բնած թարմ ծաղիկների փունջեր: Երբ գնացքը կանգնեց իր վագօնից, ընդունողների կողմից դիմաւորեցին Բօսովի և Նախիջևանի քաղաքագետն ու վերջինի քաղաքագուխը ծաղիկայ մի սիրուն փունջ բնած ձեռքի կողմից աղ ու հաց մատուցող պարոններին— «Պրեազովկի Կրայ» թերթի խմբագիր պ. Յարուստիանին և թեմական դպրոցի տեսուչ պ. Չարսեանին: Պ. Յարուստիանին բարեկարգ բարեմաղթութիւնները և հայրերի կողմից ասած ցանկութիւնները լսելուց և շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, փոխարքան նրա հետ և իշխանուհի տիկինն ու օրերորդները դիմեցին դէպի սենեակը, ուր տեղիս յաջորդ Մուշէ վարդապետը, մասնաժողովի յարգելի անդամները և հայ տիկինները սպասում էին թանգազին հիւրերին:

Այդտեղ ներկայացվեց հայերի կողմից պատգամաւոր խնդրերը կամ ուղերձը, ուր նկարագրելով մեր վերջին տարիների կրած անհրազար և ոչնչով չարդարացող հալածանքներն ու նեղութիւնները, փոխարքէն հայ ժողովրդի դէպի ուսաց գահը և պետութիւնը ցոյց տուած հաւատարիմ հպատակութեան՝ յոյս էք յայտնած, որ այսուհետեւ այդ անարդարութիւնների ու անհաւասարութիւններին վերջ կը դրվի և շնորհիւ նոր փոխարքայի, խաղաղութիւն ու անդորրութիւն կը տրել հայոց ազգի, եկեղեցու և կաթողիկոսի վերաբերված ու բնաբարված իրաւունքները կը վերականգնվեն:

Այսուհետեւ մի շատ ոգևորված բանախօսութիւն արաւ յանձնաժողովի անդամ երդուեալ հաւատարմատար պ. Գ. Չախուշեանը, նոյն մտքով, ինչ մտքով կազմած էր ուղերձը: Ճանախօսն ի միջի այլոց ընդգծեց իր ճառի այն կտորը, ուր խօսեց այն անտեղի մեղադրանքների մասին, որոնք բարդում էին հայ ազգի վրա իրք հակապետական և յեղափոխական ու խոտհարար ազգի վրա: Պարոնը շեշտեց, որ եթէ իրօք այդ յեղափոխութիւնը կայ Կովկասում՝ նշանակում է երկիրը բարեկարգ վիճակի մէջ չէ և իր մէջ պարունակում է յեղափոխութիւն ստեղծելու պայմաններ, որոնց իբրև հմուտ բժիշկ պէտք է արժատախիլ անէ և երկրում խաղաղութիւն մտցնէ նոր Փոխարքան: Հայերը իրանց բաւարարութիւնն ստացած կը համարեն, երբ կովկասեան միւս ազգերի հետ միասին իրաւունք կը ստանան ապրելու իբրև ինքնուրոյն ազգեր, իրանց յատուկ լեզուով, ասանձին կրօնով ու սովորութիւններով, առանց որ և է տարբերութեան բուն ողջ ժողովրդի վայելած արժօնութեան, համահաւասար իրաւունքներով և իբրև իրանց բուն երկրի ազատ քաղաքացիներ, առանց որ և է իրաւունքների սահմանափակումներին:

Բոլոր ցանկութիւններին Փոխարքան պատասխանեց հանդիշի զգացումներով և խոստացաւ տեղ հասնելուն պէս ձեռնարկել երկրի խաղաղացման և տիրող անօրմալ դրութեան վերացման, որը միակ նպատակն է թագաւոր Կայսրի և իր: Փոխարքայի ամուսինը կոմսուհին ևս խօսակցելով իրան ծաղիկայ փունջ ներկայացնող և ընդունող հայ տիկինների հետ, ի միջի այլոց յայտնեց, որ իր ամուսինը հիմնովին կողմնակից չէ այժմեան Կովկասում տիրող ուղղութեանը:

Այսուհետեւ սիրալիւր կերպով Փոխարքան և իր ընտանիքը բաժանվեցին հայերից, դուրս եկան սենեակից դէպի վագօնը: Այդտեղ հայ քաղաքացիներ մի քանի խմբեր խնդրեց ներկայացրին և խնդրեցին իրանց դառն վիճակի բարեբուժում և ապաստութիւն: Մրանց էլ խոստանալով շուտափոյթ կարգադրութիւն՝ մասնավագօնը և մի քանի քաղցից յետոյ գնացքը ընթացաւ դէպի Բօսով, բարձրաձայն օրհաններէ՝ ուղեկցութեամբ, որոնք նոյն ոգևորութեամբ շարունակում էին մի քանի վայր՝

